Շ-9530

ՀԱՍՏԱՏՈՒՄ ԵՄ՝
Շրջակա միջավայրի նախարար
Հակոբ Սիմիդյան

«01» 11 2023թ.

ՊԵՏԱԿԱՆ ՓՈՐՁԱՔՆՆԱԿԱՆ ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

ՇՐՋԱԿԱ ՄԻՋԱՎԱՅՐԻ ՎՐԱ ԱԶԴԵՑՈՒԹՅԱՆ ՓՈՐՁԱՔՆՆՈՒԹՅԱՆ

ԲՓ № 0194-23

Ձեռնարկողը՝ ***«Բնապահպանական ծրագրերի իրականացման գրասենյակ» պետական հիմնարկ***
ք. Երևան, Արմենակյան 129

Գործունեությունը՝ ***Դիլիջան համայնքի Աղավնավանք և Հաղարծին բնակավայրերում ոռոգման ջրագծի կառուցման աշխատանքների շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման հաշվետվություն***
Տավուշի մարզ

«Շրջակա միջավայրի վրա ազդեցության փորձաքննական կենտրոն» ՊՈԱԿ-ի տնօրենի պարտականությունները կատարող՝ Խաչիկ Մարտիրոսյան

Առդիր եզրակացությունը՝ 5 թերթ

ՊԵՏԱԿԱՆ ՓՈՐՁԱՔՆՆԱԿԱՆ ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

ՇՐՋԱԿԱ ՄԻՋԱՎԱՅՐԻ ՎՐԱ ԱԶԴԵՑՈՒԹՅԱՆ ՓՈՐՁԱՔՆՆՈՒԹՅԱՆ

ԲՓ № 0194-23

«01» Հոկտեմբերի 2023թ.

Դիլիջան համայնքի Աղավնավանք և Հաղարծին բնակավայրերում ոռոգման ջրագծի կառուցման աշխատանքների շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման հաշվետվություն

Ձեռնարկող՝	« Բնապահպանական ծրագրերի իրականացման գրասենյակ» պետական հիմնարկ
Փաստաթղթի տեսակը՝	Շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման հաշվետվություն
Գործունեության կատեգորիա՝	«Բ» կատեգորիա
Տեղադրման վայրը՝	Տավուշի մարզ, Դիլիջան համայնք

Ներածական մաս. «Բնապահպանական ծրագրերի իրականացման գրասենյակ» պետական հիմնարկի կողմից ներկայացված շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման հաշվետվությամբ /այսուհետ՝ Հաշվետվություն/ նախատեսվում է «Դիլիջան» ազգային պարկ ՊՈԱԿ-ի/այսուհետ՝ «Դիլիջան» ԱՊ/, Դիլիջան համայնքի Հաղարծին և Աղավնավանք բնակավայրերի վարչական տարածքներում ոռոգման ջրագծի անցկացման աշխատանքներ:

Գործունեության իրականացման համար հիմք է հանդիսացել Դիլիջանի համայնքապետարանի կողմից 2023թ. ապրիլի 6-ին տրված N Ա1-29 նախագծման թույլտվությունը:

«Շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման և փորձաքննության մասին» օրենքի 14-րդ հոդվածի 8-րդ մասի համաձայն՝ նախատեսվող գործունեությունը հանդիսանում է «Բ» կատեգորիայի գործունեության տեսակ:

Նկարագրական մաս. Գործունեության ենթակա տարածքը գտնվում է Տավուշի մարզում՝ «Դիլիջան» ԱՊ-ի տնտեսական գոտու, Հաղարծին և Աղավնավանք բնակավայրերի վարչական տարածքներում: Նախատեսվող գործունեության նպատակն է կառուցել ոռոգման ջրագիծ, ինչը կխթանի համայնքի ագրոտնտեսական աճի բարձացմանը: Ջրագծի ընդհանուր երկարությունը 2135մ է, որից 641մ անցնելու է «Դիլիջան» ԱՊ-ի տարածքով, 1604մ՝ Աղավնավանք բնակավայրի, իսկ 531մ՝ Հաղարծին բնակավայրի վարչական տարածքով:

Հաղարծին և Աղավնավանք բնակավայրերի հողատարածքի նպատակային նշանակությունը գյուղատնտեսական է, իսկ գործառնական նշանակությունը՝ արտադրական: «Դիլիջան» ԱՊ-ի հողատեսքի նպատակային նշանակությունը՝ բնապահպանական,

պատմական, մշակութային և այլ նշանակության հողեր, գործառնական նշանակությունը՝ հատուկ պահպանվող տարածքների:

Գործունեության իրականացման համար օգտագործվելու են Դիլիջանի համայնքային հողերը:

Նախատեսվող գործունեության տարածքների երկրաբանական կառուցվածքում (վերևից ներքև) հանդիպում են չորրորդական և ժամանակակից գետային նստվածքներ:

Համաձայն ՀՀՇՆ II-7.01.2011 նորմերի՝ ուսումնասիրվող տարածքում գրունտի սառեցման առավելագույն խորությունը կազմում է 47 սմ և բարենպաստ է շինարարություն կատարելու համար:

Հիդրոերկրաբանական տեսակետից տարածաշրջանին բնորոշ է գրունտային ջրերի ցածր մակարդակը:

Ֆիզիկաերկրաբանական վտանգավոր երևույթներ ինչպիսիք են կարստը, սողանքը, քարաթափությունը, փլուզումը և այլն տարածքում բացակայում են:

Ինժեներաերկրաբանական և հիդրոերկրաբանական պայմանները բարենպաստ են շինարարական աշխատանքներ իրականացնելու համար:

Շինարարության տևողությունը կկազմի 60 օրացույցային օր:

Շրջանի կլիման բարեխառն է՝ չափավոր տաք ամառներով և մեղմ ձմեռներով: Տեղումների միջին տարեկան քանակը կազմում է 593մմ, ձյան ծածկույթի միջին բարձրությունը 18սմ է, օդի տարեկան միջին ջերմաստիճանը կազմում է 8,3^{o}C, բացարձակ նվազագույնը՝ -23.0^{o}C, բացարձակ առավելագույնը՝ +38.0^{o}C: Օդի հարաբերական խոնավությունը՝ 73%: Քամու միջին տարեկան արագությունը հավասար է 2 մ/վրկ:

Տարածաշրջանի նշանավոր առանձնահատկությունը հարուստ գետային ցանցն է: Գետերն ու գետակները տիպիկ լեռնային են, սնվում են ձնհալից և անձրևաջրերից, ինչպես նաև բազմաթիվ ստորերկրյա աղբյուրներից:

Ծառաթփային բուսականությունը նախատեսվող գործունեության հատվածում բացակայում է:

Հաշվետվության համաձայն՝ խողովակաշարերն անցկացվելու են գոյություն ունեցող ճանապարհի հարևանությամբ, օգտագործվելու են համայնքային նշանակության հողերը, գոյություն ունեցող ասֆալտապատ և գրունտային ճանապարհները: Աղավնավանք բնակավայրում ջրագծի կառուցման աշխատանքները ներառում են.

- «Գետիկ գետի վտակ»-ի գլխամասային հանգույցի վերակառուցում,
- «Գետիկ գետի վտակ»-ի գլխամասային հանգույցից սնվող ոռոգման ջրագծերի վերակառուցում,
- ոռոգման ջրագծի կառուցում I/1-1 - de110(PE), L=38.0մ,
- ոռոգման ջրագիծ կառուցում I/1-2 - de125(PE), L=43.0մ,
- ոռոգման ջրագիծ կառուցում I/2 - de90(PE), L=84.0մ,
- ընդհանուր 43 ջրթող հանգույցի կառուցում՝ DN50(ST) պողպատե և de63(PE) պոլիէթիլենե խողովակներով:

Հաղարծին բնակավայրում համակարգը գտնվում է բարվոք վիճակում, ջրաքանակի ավելացման նպատակով նախատեսվում է ջրընդունիչի կառուցում, որն իր մեջ ներառում է հետևյալ աշխատանքները.

- «Սպիտակաջուր վտակի» վրա գլխամասային հանգույցի կառուցում,
- «Սպիտակաջուր վտակի» գլխամասային հանգույցից սնվող ոռոգման ջրագիծ՝ I/1 - DN100(ST), L=45.0մետր պողպատե, I/1 - de110(PE), L=486.0մետր, պոլիէթիլենե խողովակներով:

Այն հատվածներում, որտեղ մեքենամեխանիզմների հասանելիությունը հնարավոր չէ, շինարարական աշխատանքները նախատեսված են իրականացնել ձեռքով՝ բացառելով հնարավոր բնապահպանական ռիսկերը:

Գործունեությունը նախատեսվում է իրականացնել Դիլիջանի համայնքային հողերի և «Դիլիջան» ԱՊ-ի տարածքում: Ջրագծի արտաքին ցանցը մասամբ անցնելու է «Դիլիջան» ԱՊ-ի տարածքով, որից ելնելով շինարարական աշխատանքներն իրականացվելու են հատուկ սկզբունքներով:

Նախատեսվող գործունեության իրականացման տարածքում բուսահողի ծավալը գնահատվել է 384,3մ^3, որը հեռացնելուց հետո կուտակվելու է հետագա օգտագործման համար: Ըստ բուսաբանական հետազոտությունների՝ նախատեսված գործունեության տարածքներում հանդիպող բուսատեսակներն ընդգրկված չեն ՀՀ Կարմիր գրքում:

Շինարարական աշխատանքների իրականացման ընթացքում օգտագործվելու են ավտոինքնաթափ, ավտոամբարձիչ, ձեռքի պնևմատոփիչ բետոնատար մեքենա, եռակցման ագրեգատ, բուլդոզեր, շարժական կոմպրեսոր, էքսկավատոր, ավտոբետոնախառնիչ և այլն, ինճպես նաև տարբեր շինարարական նյութեր՝ բետոնային խառնուրդ, ամրաններ, ջրամեկուսիչ նյութեր, բիտումա-պոլիմերային մաստիկ, եռակցման էլեկտրոդներ և այլն, որոնք նախընտրելի է ձեռք բերել արտոնագրված մատակարարներից: Բնական ռեսուրսներից օգտագործվելու է ջուր՝ տարածքների ջրցանի, հողի/գրունտի խոնավացման և շինանձնակազմի կենցաղային նպատակների համար: Ջրցանի համար նախատեսված ջուրը բերվելու է ջրցան մեքենաների միջոցով, իսկ խմելու համար ջուրը գնվելու է համապատասխան առևտրի կետերից: Շինարարության ժամանակահատվածի համար ընդհանուր ջրօգտագործումը հաշվարկվել է ըստ սպասարկող աշխատողների թվաքանակի (21մարդ), կենցաղային և ջրցանի նպատակով՝ ինչը կազմում է 86.8 մ^3: Շինարարության փուլում աշխատողների կոմունալ կենցաղային պայմաններն ապահովվելու են՝ տեղադրելով շարժական բիոզուգարան, որը տեղադրվելու է վարձակալության հիմունքով և աշխատանքների ավարտից հետո հանվելու է: Բիոզուգարանի տեղադրումն ու սպասարկումն իրականացվելու է համապատասխան մասնագիտացված կառույցների կողմից:

Նախատեսվող գործունեության ընթացքում փորման արդյունքում հանվելու է 384,3մ^3 գրունտ, որից 367,5 մ^3 օգտագործվելու է հետլիցքի, իսկ 16,8 մ^3 մնացորդային գրունտը կտեղափոխվի Դիլիջան համայնքի կողմից հատկացված աղբավայր: Կենցաղային աղբի կուտակման համար շինհրապարակն ապահովված կլինի համապատասխան աղբամաններով:

Նախատեսվող գործունեության շրջակա միջավայրի վրա ազդեցությունները հիմնականում կապված են լինելու՝ քանդման, փորման, հողային աշխատանքների, շինարարական տեխնիկայի, մեխանիզմների շահագործման ընթացքում առաջացող գազանման արտանետումների հետ (վառելիքի այրման արդյունքում):

Հաշվետվության համաձայն՝ շրջակա միջավայրի պահպանման և վերջինիս բաղադրիչների վրա հնարավոր բացասական ազդեցությունները մեղմելու նպատակով նախատեսվում են բնապահպանական մի շարք միջոցառումներ: Մասնավորապես

- մթնոլորտային օդ աղտոտող նյութերի (փոշի, CO, NOx) արտանետումների քանակական պարամետրերի պարբերական չափումներ՝ ամիսը մեկ անգամ,
- տեխնիկական միջոցների աշխատանքային վիճակի՝ մասնավորապես չեզոքացուցիչ սարքավորումների սարքին վիճակի պարբերական մշտադիտարկումներ՝ ամիսը մեկ անգամ,
- փոշենստեցման նպատակով տարածքի ջրցանում,
- հողերի աղտոտվածության մշտադիտարկումներ՝ ամիսը մեկ անգամ,
- աղմուկի և թրթռումների մշտադիտարկումներ,
- կենսաբազմազանության մոնիթորինգ՝ շինժամանակահատվածում մեկ անգամ,
- շինհրապարակի որակի, բանվորական հագուստի կուլտուրայի, անվտանգության կանոնների պահպանմանն ուղղված մշտադիտարկում՝ համաձայն ՀՀ կառավարության 2020թ. հուլիսի 2-ի նիստի N 87 արձանագրության պահանջների,
- գործունեության տարածքում աշխատանքներն իրականացնել՝ խստորեն վերահսկելով հանդիպող բուսականության մաքրումը խողովակաշարի ուղեգծի երկայնքով՝ սահմանված միջանցքից դուրս ազդեցությունները կանխելու համար,
- գործունեության և հարակից տարածքներում ՀՀ Կարմիր գրքերում գրանցված բուսատեսակների կամ կենդանիների բնադրավայրերի հայտնաբերման դեպքում ընկերությունը տեղեկացնելու է «Դիլիջան» ԱՊ-ին՝ դրանց պահպանությունն ապահովելու նպատակով,
- բացառվելու են ծառահատումները, բնական ռելիեֆի արհեստական փոփոխությունը,
- շինարարական աշխատանքների ժամանակ շրջակա միջավայրը և գործունեության տարածքը զերծ է պահվելու թափոնների կուտակումներից, բացառվելու է տարածքում թափոնների բաց այրումը,
- շինարարության ընթացքում պահպանվելու են արտակարգ իրավիճակների և աշխատանքի անվտանգության նորմերը և այլն:

Բնապահպանական միջոցառումների իրականացման համար նախատեսվում ներդնել 250000 ՀՀ դրամ:

Պատճառաբանական մաս. Գործունեության ենթակա տարածքը գտնվում է Տավուշի մարզի Դիլիջան համայնքի Հաղարծին և Աղավնավանք բնակավայրերում:

Ջրագծի անցկացման ընթացքում շրջակա միջավայրի բաղադրիչների վրա հնարավոր բացասական ազդեցությունները լինելու են նվազագույն և կրելու են ժամանակավոր բնույթ:

Փորձաքննական գործընթացին ներգրավվել են շրջակա միջավայրի նախարարության ստորաբաժանումները, առողջապահության, ներքին գործերիի, կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարությունները, քաղաքաշինության կոմիտեն, Տավուշի մարզպետարանը, Դիլիջանի համայնքապետարանը: Հաշվետվությունը լրամշակվել է հաշվի առնելով ներկայացված առաջարկությունները և դիտողությունները:

Օրենսդրությամբ սահմանված կարգով Տավուշի մարզի Դիլիջանի համայնքապետարանում իրականացվել են հանրային քննարկումներ, ինչի ընթացքում հանրությունը դրական է արտահայտվել նախատեսվող գործունեության վերաբերյալ:

Փորձաքննական պահանջներ

- Շինարարական աշխատանքների իրականացման ընթացքում անհրաժեշտ է հետևել գնահատման հաշվետվությունում ամրագրված բնապահպանական միջոցառումների կատարմանը, ժամանակացույցին, իսկ դրանց չբավարարման դեպքում նախատեսել

լրացուցիչ միջոցառումներ՝ ուղղված բնապահպանական, հրդեհաանվտանգության և սանիտարական նորմերի պահպանմանը:

- Շինարարական աշխատանքներն անհրաժեշտ է կատարել օրվա սահմանված ժամերին՝ հնարավորինս նվազագույնի հասցնելով աղմուկի մակարդակը և ճանապարհների առավելագույն ծանրաբեռնվածությունը:
- Գործունեության և հարակից տարածքներում ՀՀ Կարմիր գրքում գրանցված բուսատեսակների պոպուլացիաների հայտնաբերման դեպքում անհապաղ տեղեկացնել «Դիլիջան» ազգային պարկ ՊՈԱԿ-ին:
- Պահպանել արտակարգ իրավիճակների և աշխատանքի անվտանգության նորմերը և այլն:
- Շինարարական աշխատանքների ընթացքում բացառել՝

• տարածքում թափոնների բաց այրումը՝ շրջակա միջավայրը և գործունեության տարածքը զերծ պահելով թափոնների կուտակումներից,
• ծառահատումները, հնարավորինս չխաթարել տարածքի էկոհամակարգը, լանդշաֆտը և հարակից շրջակա միջավայրը,
• «Դիլիջան» ԱՊ-ի տարածքում մեքենաների կայանումը: Մեքենաները կայանել միայն ճանապարհի երկայնքով՝ չվնասելով հողային ծածկույթը:

ԵԶՐԱՓԱԿԻՉ ՄԱՍ

Դիլիջան համայնքի Աղավնավանք և Հաղարծին բնակավայրերում ոռոգման ջրագծի կառուցման աշխատանքների շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման հաշվետվության վերաբերյալ տրվում է դրական եզրակացություն՝ փորձաքննական պահանջների պարտադիր կատարման պայմանով:

«Շրջակա միջավայրի վրա ազդեցության փորձաքննական կենտրոն» ՊՈԱԿ-ի առաջին կարգի մասնագետ՝ Ռուզան Մակինյան